Արձանագրություն N 5

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կողմից «ՀՀ Շիրակի մարզի Շիրակավանի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների գնման նպատակով կազմակերպված թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/81 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «30»-ը հոկտեմբերի, 2024թ.
սկիզբ՝ ժամը 09:45 րոպեին
ավարտ՝ ժամը 09:55 րոպեին

2024 թվականի հոկտեմբերի 30-ին ժամը 09:45-ին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գրության հիմքով, տեղի ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցու 31, ՀՎՀՀ՝ 0084644, էլեկտրոնային փոստի հասցեն՝ atdf@atdf.am) կողմից **«ՀՀ Շիրակի մարզի Շիրակավանի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/81 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) արտահերթ նիստը, որին ներկա էին Հանձնաժողովի 7 անդամները՝

Հանձնաժողովի նախագահ ՝ Սպարտակ Պետրոսյան
անդամներ՝ Մարատ Մանասյան, Նշան Հակոբյան, Լիլիթ Պետրոսյան, Լուսինե Ղազարյան, Վարդինե Իսահակյան, Արմինե Մակարյան

Նիստը նախագահում էր Սպարտակ Պետրոսյանը, քարտուղարությամբ՝ Անահիտ Եղիազարյանի:

Նախագահը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ սույն նիստը հրավիրվել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գրության հիման վրա: Հայտարարեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, այնուհետև՝ ներկայացրեց նիստի օրակարգը.

1. Ներկայացված հայտերի գնահատման նիստի օրը տեղափոխելու մասին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Քննարկման և քվեարկման արդյունքում՝ կողմ՝ 7, դեմ՝ 0 ձայների մեծամասնությամբ

Որոշվեց

1.Ներկայացված հայտերի գնահատման նիստի օրը տեղափոխելու, և հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

1.1 Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվել է թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/81 ծածկագրերով գնման ընթացակարգը, որի շրջանակներում, ըստ բացման նիստի արձանագրության, հայտեր են ներկայացվել «ԱՐՄԱՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի և «Երվադա» ՍՊԸ-ի կողմից: Նույն արձանագրության համաձայն՝ հաջորդ նիստը

նշանակվել է մասնակիցների կողմից՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները և ներկայացված հայտի ապահովումների վերաբերյալ իսկությունների հաստատումը ստանալուց հետո 2-րդ աշխատանքային օրը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն թվականի հոկտեմբերի 28-ին հանձնաժողովի անդամներին են ներկայացվել վերը նշված տեղեկությունները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 7-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը որոշեց գնահատման նիստը տեղափոխել և նշանակել 2024 թվականի նոյեմբերի 1-ին ժամը 12:30-ին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ուլնեցու 31, 2-րդ հարկ, 209 սենյակ:

Հանձնաժողովի նախագահ՝

Սպարտակ Պետրոսյան _____

անդամներ՝

Մարատ Մանասյան _____

Նշան Հակոբյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Լուսինե Ղազարյան _____

Վարդինե Իսահակյան _____

Արմինե Մակարյան _____